

ԱՅԺՄԷՈՒԹԻՒՆ

ԲԱՐԵԿԱՐԳՈՒԹԵԱՆՑ ԽՆԴԻՐԸ

Հակառակ գերմանական ու աւստրիական քերթերու յոռեան կամ կես-պաշտօնական յուրերու որով Թուրքիոյ ճնշուած ժողովուրդներուն յոյսի վերջին ճշգրիտիս վարել կը ձգնին կարծես, Երասխական ու անգլիական կարեւորագոյն քերթերը բարեգուշակ կերեւան այս միջոցիս, թէ Հայաստանի բարեկարգութեանց հարցը մէկ կողմ մեռնած չէ բոլորովին: Թանի Կ. Պոլսոյ թղթակիցը՝ ֆաղափական արդի կացութեան վրայ շատ յուր ճշտութիւն մը պարզելով, որ կրտս թէ Յունաստանի ետրիոս իշխանին քննարկութիւնը ոչ թէ վճռապէս մեռած է, այլ ժամանակի մը համար յետագայում, միևնույն որ դիւանագիտական զանազան շահեր ու նկատմաներ հաշտեցունել կարելի ըլլայ, կարելոյն է սա ուշագրաւ տղերք:

Եթէ նորանոր միջադէպեր չի գտն խանգարել համաձայնութիւն մը որ զաղափարներու և խօսքերու փոխանակութեան վրայ միայն կը կայանայ, ետրիոս իշխանին Գանտիայի կառավարիչ անուանումը սկզբնաւորութիւնը պիտի ըլլայ ընդարձակագոյն ծրագրի մը գործադրութեան որուն նպատակն է տեւողական խաղաղութիւն մը տալ եւրոպական Արեւելքի: Այս տեղ կը հաղորդեմ այն տեսակ տեղեկութիւններ որոնք մինչեւ Սուլթանին չըլլապատէ հասած են ուր մեծ մտահոգութիւն կը պատճառեն իրենց անժխտելի ծանրութեան պատճառաւ: Կրէտական խնդիրը գործադրուելուն պէս, ընդհանուր բարենորոգմանց վրայ պիտի սկսուի մտածուիլ և մասնաւորապէս ասիական գաւառներու (Հայաստանի) մէջ բարեկարգութեան հաստատման վրայ: Հայկական խնդիրը միշտ բաց կը մնայ և կարելի չէ ծածկել որ կեանքը դադար առած է Անատոլիոյ մէջ ուր արիւնի սոսկումը կը տիրէ տակաւին:

Բարիզեան մեծ քերթին թղթակիցը կարելոյն է թէ Գերմանիա նիքսական մեծամեծ շահեր ունենալով Թուրքիոյ մէջ, շատ տարաբար պիտի երեւի, միևնույն խնդիրներու կարգադրութեան ևս, աշակցի երկրին ներքին խաղաղութեան գործին: Զոհողութիւն մըն է այս իրեն համար, բայց այդպէս չի պիտի կրնայ շարժիլ ֆանի որ կորսնցումներ վրայ է այն յոյսը, թէ ինք միևնույն կրնան իշխել Սուրբանին մէջին վրայ:

Ուստի, —կեղրակացունէ— սա երկու բաներուն կրնանք սպասել. նախ և առաջ, Ռուսիոյ կողմէ զօրաւոր ջանք մը ի նպաստ արեւելքի այն քրիստոնեաներուն որոնց կացութիւնն ապահով չէ. յետոյ բողոքներ ու ընդդիմութիւններ Գերմանիոյ կողմէ, իր արեւելեան քաղաքականութեան շահուն տեսակետով, բայց որոնց անկեղծութիւնը կասկածելի պիտի երեւի:

Եւ ֆանի որ մեր դժբաղդ ժողովուրդին վիճակի բարոյական յուսատու գուշակութիւն մը կը գտնենք յուր քերթի մը մէջ, գուշակութիւն մը որուն հաւատարմութիւն մէջ իսկ հաճոյք մը ու ախոյիսն մը կայ մեզի

համար, անոր միացնունենի Լոնտոնի քերթերուն մէկ տեղեկութիւնն ալ որ ոչ նուազ ուշադրութեան արժանի է:

Կ. Պոլսոյ անգլիական դեսպան Սըր Փիլիք Բըրրի նորանոր ձեռնարկներ ըրեր է Դրան մօտ, որպէս զի օամ: Կառավարութիւնը իր նախապէս տուած խոստման համաձայն, քրիստոնեայ կառավարիչներ կարգէ Զէյթունի ու Հաճընի համար:

Ռուսիոյ ուշադրութիւնը Հայաստանի վրայ ու Անգլիոյ ուշադրութիւնը Կիլիկիոյ վրայ դարձած, անա՛ւ աշխարհիւնը զոր կը քերէ մեզի եւրոպական Սուրհանդակը, գունէ այս անգամ ի՞նչ մը շատեսն:

ԱՇԽԱՐՀԻԿ ԴԱՍԵՐ

Ա.

Լ. Գ. ԲԱՐԵԿԱՍՏԻՍ

—Կնկան մը հետ ինչպէս վարուելու է, երբ իրեն կընկերանանք փողոցին մէջ:

Աս չէ՞ հարցումը: Բայց սիրելիս, եթէ ինչ լուսինը ուզած ըլլայի դուցէ՛ այնքան շփոթութեան մէջ չի գնէիր զիս որքան այդ հարցումովը:

Չարածձի՛, կերեւայ որ եւրոպացի կնկան մը հանդիպելու ես և կը փափագի mauvaise figure չընել իր մօտ: Եթէ ընկերուհիդ հայուհի մը ըլլար ինչմէ՛ դաս առնելու հարկին մէջ չափով զգայիր դու զբեղ, հայուհիին հետ մարդ կը վարուի ինչպէս որ կրնայ, առանց քաշուելու, առանց սեթեւեթի, à la bonne franquette վերջապէս:

Անոնց հետ դժուարութիւն չես բաշք, այնքան դիւրին լոյս է անոնց ընկերանալը:

Նախ որ տոյ տոյ չի հանդիպիր, որովհետեւ ես չեմ կարծեր թէ չատ անգամներ գտնուած ըլլաւ հայ կնիք մը ընկերանալու պարագային մէջ:

Այդ galanterie՛ նախնական սկզբունքը մեր ինքներուն շատ ծանօթ չէ: Մեր կիները չեն խնդրեր որ իրենց ընկերանանք, և ոչ ալ մեր մտքէն կանցնի մեր ընկերակցութիւնը իրենց տրամադրութեան տակ գնել: Եւ եթէ երբեք ստիպողական պարագաներու մէջ հարկ ըլլայ մեզի մինչեւ իր տունը accompagner ընել կին մը, ո՛հ, ատկէ դիւրին լոյս չկայ: Ամենէն առաջ սրտով զիս մը կուտենա և պղտիկ լուսանցք մը կը թողու իր և բու մէջը, արագ կը բաշք, առաջադրուած տեղը ամենէն շուտ կերպով կարենալ հասնելու համար և քիչ մը օդին վրայ կը խոսիս —Թրամուէ՛յը կանցնի կոր կըսես: —Շատ մարդ կը կրտս կոր կը պատասխանէ: Հինգ վայրկեան լուսնի: —Մայրիկդ ինչպէս է կը հարցնէ: —Շնորհակալ եմ, վրայ կը բերես և ա՛հա՛ մէյմա՛ իր տան դրանը տա՛նք կը գտնուիս: —Շնորհակալ եմ: —Բան մը չէ: —Տունը բարեւ ըրէք: —Գլխու վրայ: —Գլխը բարի:

Հայուհին կուզէ վարժուիլ ըլլայ կուզէ պանքերի կին, դեռատի կամ քիչ մը անցած, Պոլսեցի կամ գաւառացի, տղեր կամ տղեղ, գէր կամ նիհար, ամենքն ալ այսպէս են. մի հոգնիր հակառակը հաստատելու: Հետեւաբար մեծ վարպետութեան, կատարեալ աշխարհիկ մարդ ըլլալու պէտք չիայ հայ կին մը accompagner ընելու համար. և ասիկայ կեանքիդ մէջ մեց անգամ չի պատահիր:

Բայց եւրոպացի կինը տարբեր է: Անոր ընկերանալու համար կուզես էրկիւր եղիր, կուզես եղբայրը և կամ պարզապէս բարեկամը, զիտցիր որ, քու ընկերակցութիւնդ նոյն իսկ եթէ ժամ մը, քառորդ մը տեւէ, դո՛ւ, պարտականութիւններուն ա՛մենէն դժուարը, ամենէն վատագուորը և ամենէն պանծալին կը կատարես:

Այդ պաշտօնը անթերի կատարելու համար, բարեկամ, պէտք է որ խել մը յատկութիւններ ունենաս, խելք, փորձառութիւն, տաղանդ և խելալի ահագին պաշար մը:

Մեծ, շատ մեծ պատասխանատուութիւն մըն է որ վրայ կանես նոյն իսկ եթէ հինգ վայրկեանի համար այդ պաշտօնը կը ստանձնես. պէտք է աչք առնել ամեն վտանգ որովհետեւ այդ հինգ վայր.

կեսին մէջ ամեն բան կրնայ պատահիլ:

Ընկերուհիդ կրնայ ճամբան պղտիկ անարգանքի մը ենթակայ ըլլալ, բայց դուն պաշտօնական գիտնալու ես, նոյն իսկ բու արեւմտեղ գնով, Եւրոպացի կին մը մինչեւ իր տունը յանձնելու մէջ աւելի անձնագործութիւն կայ քան թէ . . . հերոս ըլլալու մէջ:

Որքան բովիւրդ տղեր ըլլայ վտանգը այնքան մեծ է, առ մի մտնար. տղեր կին մը յարձակումներէ գերծ պահելու համար տեղի բաժնութիւն, աւելի խորամանկութիւն պէտք է, քան ինչ որ պէտք էր Բէյլեան Ռուսերուն չի տալու համար:

Չեմ գիտեր թէ ընկերութեան որ դասակարգին կը պատկանի այն կինը որուն ընկերացի ես և կամ կուզես ընկերանալ, ինչ որ ալ ըլլայ իր վիճակը, եթէ հինգ վայրկեան, կամ քանի մը ժամեր պիտի տեւէ քու ընկերութիւնդ, գրաւանդ պէտք է վանալով իր գանձերը պարտաւորէ. որովհետեւ տիկինը կրնայ յանկարծ քննէ խնդրել մտքիդ շանչած բան մը. լուսինը՝ օրինակի համար, և վա՛յ քեզի եթէ վայրկեանապէս չես կրնար իր իղձը լրացնել:

ԹԱՏԱՄԷՍ

ՕՐՈՒԱՆ ԼՈՒՐԵՐ

Պուլկարիոյ և Դրան միջեւ յարաբերութիւնները ձգտուած են, ինչպէս կը յիշուի: Թուրքերը Մակեդոնիոյ քանի մը պուլկար եւ պիսկոպոսներու առաջնորդական պէրաթները տալէ ետք, փորձած էին սարսափի տակ պահել այդ նահանգին պուլկար ժողովուրդը. Սոփիայի կառավարութիւնը հասկցաւ որ Դուռը իշխանապետութեան շահերուն նպաստել չուզէ՛ զատ, անոնց վնասելու կաշխատի, ուստի զինուորական խիստ միջոցներ ձեռք առաւ ի հարկին բանակը անմիջապէս շարժուն վիճակի մէջ գնել կարենալու համար:

Իրաց այս կայութեան հանգէպ, Սուլթանը հրամայեց որ վերջ մը տրուի Մակեդոնիոյ պուլկարներու հալածանքին և յանձնաժողով մը կազմեց որ պիտի երթայ քնննութիւն կատարել տեղւոյ վրայ: Միւս կողմէ, փափագ յայտնել է տեսակցութիւն մը ունենալ Ֆէրիսնան իշխանին հետ:

Դարձեալ, կը հաղորդուի Կ. Պոլսէ թէ Սուլթանը հրամայեց է ազատ արձակել Գոսովի մէջ բանտարկուած պուլկարները, բացի 15 հոգիէ որոնք ամբաստանուած են թէ յեղափոխական արարքներու մէջ գտնուած էին: Այս առթիւ, պուլկար իշխանապետութիւնը խնդրած է Դուռնէն, որ Մանասլըրի մէջ բանտարկուած պուլկարներն ալ արձակուին:

Այս հաշտարար ընթացքով, Դուռը յաջողած է առաջին անգամ իր և Պուլկարիոյ միջեւ ծագած միջադէպերուն որոնք կրնային աւելի ծանր հանգամանք մը ստանալ:

Թուրք կառավարութիւնը իր պայմանագիրները վերանորոգել է Թեսալիոյ բանակին ուստի հայթայթիչներուն հետ, ուսկից կը հետեւի թէ միտք չունի իր զօրքերը շուտով հեռացունել անկից:

Բարիզէն հեռագիր մը կը հաղորդէ թէ Զօլա վերադրնութեան պիտի դիմէ:

Երեսփոխանական ժողովոյ հինգ շաբթի օրուան նիստին մէջ դարձեալ յուզուել է Տրէֆիւսի խնդիրը, Պ. Հիւպպար քննադատելով զօրավարներու ընթացքը Զօլայ դատին մէջ: Նախարարապետ Պ. Մէլին պատասխաններ է, բանակին գովեստն ընելով: Աւելորդ է ըսել թէ խնդիրը փակուել է վստահութեան քուէով մը (41ի դէմ 416):

—Յոնաստանի խորհրդարանը պիտի գու-
մարուի մարտ 3ին : Պատերազմական տու-
գանքին վճարման համար կնքելի փոխառու-
թեան բանակցութիւններն աւարտել են :
Թալլին Սթէնի թղթակիցը կրէ թէ ռուս
գետական ծանուցել է հելլէն կառավարու-
թեան թէ Ռուսիա, իր մասին, որոշած է
երաշխաւորել այդ փոխառութիւնը :

—Նիւ Եօքէն հեռագիր մը կը հաղորդէ
թէ պորային մէջ մեծ իրարանցում կը տիրէ
այն զրոյցին վրայ թէ կատարուած քննու-
թեամբ կը հաստատուի որ ամերիկեան Մէյն
մարտանաւուն պայթումը դիպուածական չէր :

Ա Ձ Գ Ա Յ Ի Ն

Այս հինգշաբթի օր, Ս. Վարդանանց զո-
րավարաց տօնին առթիւ, առաջնորդական տե-
ղապահ Հայրը պատարագ մատոյց Մարմինայի
Ս. Մինաս մատրան մէջ, յետ որոյ հոգեհան-
գրատեան հանդիսաւոր պաշտօն կատարուե-
ցաւ համայն հայ ննջեցեաց հոգեղին :

Նոյն տօնին առթիւ, Աղեքսանդրիոյ աղգ-
վարժարանին մէջ ալ հանդէս կատարուեցաւ
երգերով ու ատենախօսութիւններով : Հան-
դէսը փակեց օրհնութեամբ Տ. Վահրամ վար-
դապետ :

Ճորանայի պիտական կաճառին անդամ-
ներէն Պ. Պ. Լավիսի, Անագօւ Լըռուա Պօլի-
էօի և Մ. Մըլօնի հովանաւորութեան տակ
համալսարանական յանձնախումբ մը կազմուել
է որ իր պաշտպանութեան տակ պիտի առ-
նէ այն հայ ուսանողները որոնք Հայաստանի
վերջին դէպքերուն բերմամբ իրենց ուսանու-
ղութիւնը շարունակելու նիւթական միջոցնե-
րէ զուրկ կը գտնուին :

Այդ յանձնախումբին մասնակցած են
նաեւ Բարիզի ամբողջ համալսարաններու պատ-
կանող խումբեր առանց խտրութեան գաղա-
փարի և կրօնքի : Գանձախումբը հանգանա-
կութեան մը ձեռնարկած է արդէն :

Ամսոյ 14ին տեղի ունեցել է ի. Կ. Պոլիս, երե-
տասարդ ու տաղանդաւոր իսառարան Տիար Սմատ
Քեաթիպեանի ամուսնութիւնը Որ. Զարուհի Յ. Մա-
նուկեանի հետ, քոյր Տիկին Պօղոս պէյ Աշքեանի :

Տիար Քեաթիպեան, եղբորորդի բարեխառակ
Տօրթ. Քեաթիպեանի, քաջ Ֆրանսագէտ ու քաջ օ-
րհնագէտ, իր ուսանողութեան միջոցին իսկ սրբուցած
է սոյնպիսի բարձր ընդունակութիւն մը որ քանիցս ար-
ձագանգ գտած է բարիքեան մասուլին մէջ :

Հինգշաբթի օրը տեղի ունեցաւ Աղեքսանդրիոյ
մէջ, Տիար Գառնիկ Արշալիրի ամուսնութիւնը Օրի-
որդ Պէմպրիս Պէյլիքճեանի հետ, կնքահայրութեամբ
Յովհաննէս աղա Մաթոսեանի :

Մեր ջերմ շնորհաւորութիւնները նորաստակ
ամուլին :

Տ Ե Ղ Ա Կ Ա Ն

Բարձր. Խտիվը երէկ գիշեր Ապտինի
պալատին մէջ հացկերոյթ մը տուաւ ի պա-
տիւ Սաքս-Գոպուրի դուքսին : Սեղանին հրա-
ւիրուած էին նաեւ խտիվական գերդաստանի
անդամները, նախարարները ու գիւնանագի-
տական մարմինը :

—Սահմանադրութիւն առնուած լուրերու
նայելով, Սուտանի կրկաթուղւոյն շինութիւնը
փութով առաջ կը տարուի :

—Բարձր. Խտիվը այս իրիկուն յատուկ
կառախումբով Իսմայիլիա կողմերի, ուսկից
իւր հետեւորդներուն հետ ուղտով պտոյտ մը
պիտի կատարէ մինչեւ Էլ—Արիշ : Իր բացա-
կայութիւն պիտի տեսնուի տասներկու օր :

—Մակակայի մէջ (Վերին Նգիպտոս) ոճ-
րագործներ, որոնք այս պահուս ձերբակալ-
ուած ըլլալու են, անցեալ երկուշաբթի օր ըս-
պաններ են, Ուիլիէմ Գէմբ անուն անգլիացի
մը որ զբօսաշրջիկներու նաւէ մը յամար ե-
լած էր բօւթային նամակ մը յանձնելու համար :
Տարաբաղդ անգլիացիին դիակը Գահիթէ
փոխադրուելով չորեքշաբթի օր հանդիսաւո-
րապէս թաղուեցաւ անգլիական գերեզմա-
նատան մէջ :

Ոստիկանութիւնը մասնաւոր պատուի-
րակներ զրկած է Մակակայ, տեղւոյն վրայ
խիստ քննութիւն մը բանալու համար :

—Աղեքսանդրիոյ մէջ երեսունըփեց տա-
րիէ ի վեր հաստատուած և ամենուն ծանօթ
անգլիացի Տօրթօր Սըր Ճէյմս Մաքքի նա-
խընթաց օր մեռել է այդ քաղաքին մէջ և
յուզարկաւորութիւնը կատարուել է խուռն
բազմութեան մը ներկայութեամբ :

—Վաղը, կիրակի Հէլուանի մէջ տեղի
պիտի ունենայ իտալական բարեգործական
ընկերութեան դաշտահանդէսը, հովանաւորու-
թեամբ Պ. Թուճիկի :

Յայտագրին նայելով հանդէսը փայլուն
ըլլալ կը խոստանայ : զինուորական նուագա-
խումբ, էշարչաւ, ձայնական նուագահանդէս,
թատերական ներկայացում, սինէմաթօկրաֆ
և հրախաղութիւն :

Ժամը 3ին տեղի պիտի ունենայ դրամի
վիճակահանութիւնը որուն մեծ պարգէն է
5000 ֆրանք :

Ա Ձ Դ

ՏԱՅՐԱ ԱՆԻ ՓԱՇԱ ՇԵՐԻՖ

Ներկայիւս կը ծանուցուի հասարակութեան քե՛
Այի փաշա Շերիֆի ցայային վեֆի՛ Ամմէ Էմինի
Ֆաթիի ամսոյ 20ին ի վեր հրաժարեցուցուած է իր
պաշտօնէն ըստ պաշտօնապէս իրեն հաղորդուած
ազդարարութեան :

Գահիրէ 24 Փետրուար 1898

Ա Կ Ա Մ Ա Յ Հ Ե Ր Ո Ս Ը

(ԻՐԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ)

Շարունակութիւն Գախող քիւէն

2.

Երբոր ամենքս ցամար ելանք և պաշարներն
ու զէնքերն ալ փոխադրուեցան, անձրեւէն պատու-
պարտուելու համար ժողովուեցանք խոշոր ծառի մը
տակ :

—Ի՞նչ պիտի ընենք հիմա, հարցուցի քովս կե-
ցողներէն մէկուն :

—Կեցիր նայինք, պատասխանեց, քաբիքանիս
պիտի ըսէ :

—Քաբիքան ունինք :

—Հարկաւ. սա նիհար, երկայնահասակ մարդը :

—Անունը ի՞նչ է :

—Ֆանոս :

Ու ականջիս մօտենալով փոփսայ :

—Ձինուորական մըն է, բանակին մէջ հարկա-

րապետի աստիճան ունի : աղէկ մարդ է, բայց չստ
խիստ, հետը կատակ չըլլար :

Քաբիքանը կամ ինչպէս մերինները կըսեն հերո-
սապետը կամ հայդուկապետը, մօտեցաւ մեր խըմ-
բին ու պէխերը ոլորելէ ետք ըսաւ :

—Պակաս մարդ կ'ա՞յ մէջերնիդ :

—Ո՛չ, տասնըչորսերնիս ալ հոս ենք, պատաս-
խանեց ձայն մը :

—Լա՛ւ :

Յետոյ քովը կեցող մէկուն դառնալով աւելցուց :

—Սթաւրօ՛, ամենուն կօշիկները, գէնքերը և
ուտելիքը բաժնէ՛, շուտ, աստէն չկորսնցնենք :

Ու սիկարա մը վառելով, դիտակը գրպանէն
հանեց և անդին գնաց չորս կողմը զննելու :

Այն ատեն ամեն մէկերնուս տուին մէյմէկ կրե-
տայիի դեղին կարճ ճիզմէ, մէյմէկ հրացան, փամ-
փուշտ, ու մէյմէկ մախալ որուն մէջ գրինք երկու
հաց, քանի մը ալած ձուկ, քանի մը շիշ բէշինա ու
տուփ մը ծխախոտ :

Երբ այս գործողութիւնը մնցաւ, քաբիքանը ե-
կաւ քովերնիս ու խիստ ձայնով մը հարցուց :

—Տղա՛ք, պատրաստ էք :

—Այո, պատասխանեցին ամէնքը :

—Ուրեմն ձամբայ ելլենք :

Եւ ձամբայ ելանք :

Անձրեւին տակ, մութին, քարերու և մացառ-
ներու մէջէն քալեցինք այսպէս ծամերով. քանի կը
քալէինք ցորտն ալ այնչափ կը սաստկանար, որով
հետեւ միշտ դէպի լեռները կ'ըլլէինք : Յոգնած,
դադրած՝ խիստ եղած, լուսնալու մօտ հասանք
լեռան մը գլուխ, յոյ՛ի գեղ մը :

Գեղացիները մեծ պատիւներով մեզի դիմաւո-
րեցին : Ամէն մարդ կողքէր որ մէջերնէն մէկը իր
տունը տանի հիւրընկալելու համար : Իմ թեւէս գե-
ղին տէրտէրը քաջեց տարու ու աղէկ մը կերցնել
ու խմցնելէ ետքը, տեսնելով որ ո՛չ նստելու ո՛չ
ալ խօսելու կարողութիւն ունիմ, զիս առաջնոր-
դեց սենեակ մը՝ ուր պատրաստ անկողին մը կար :
Մինչեւ գիշեր այդ գեղը պիտի մնայինք հանգստա-
նալու համար ու գիշերուայ նորէն ձամբայ պիտի
ելլէինք : Հաղիւ թէ հանուլ սկսայ սոսկալի դող մը
բռնեց զիս : Անձրեւէն, ցորտէն ու բաշած յողնու-
թեան ետքը արդէն հրաշք պիտի ըլլար եթէ հի-
ւանդ չըլլայի :

Ի զո՛ւր վերմակներուս մէջ կը փոթ թուէի տաք-
նալու համար, ակունքս կոտորուելու աստիճան ի-
րարու կը զարնուէին : Երկու ժամ՝ դողդուցի այս-
պէս, յետոյ սոսկալի տաքութիւն մը յաջորդեց ու
անդգայ թաղուեցայ վերմակներուս տակ :

Ե.

—Է՛հ, է՛հ, փառք Աստուծոյ, այսօր աղէկ ես,
ըսաւ տէրտէրը սենեակէն ներս մտնելով. մեզի
դող հանեցիր, երեք օր է ինքզինքդ կորսնցուցեր էիր :

—Երե՞ք օր . . .

—Հապա, երեք օր է ի վեր բրբենդ չէնք շնորհք
խօսք մը շկրցանք առնել. մինչեւ ետքը զառանցե-
ցիր : Քանի՞ քանի անգամ Աւետարան կարգացի
գլխիդ վրայ, վերջապէս Աստուածածինը ողորմեցաւ :

Տէրտէրին խօսքերը տախտակայ ըրին զիս : Կը
կարծէի որ քանի մը ժամ բնանալէ ետքը կար-
թընամ կոր, մինչդեռ երեք օրէ ի վեր անկողինն
եմ եղեր :

Մէկէն ի մէկ չի կրցայ յիշել բոլոր անցած դար-
ձածը :

Տէրտէրը որ աչքիս առջեւ կեցած էր ինձի
անանկ եկաւ որ Իսկիւտարի մեր տաներէցն է,
միայն թէ չէի կրնար բացատրել թէ ինչո՞ւ համար
յուշարէն կը խօսէր հետս :

—Ի՞նչպէս է տաքութիւնդ, շարունակեց ծե-
րունին, անկողինիս մօտ գալով ու ձեռքս բռնելով :

—Քիչ մը աղէկ եմ կարծեմ :

—Անշուշտ բիշ մը աղէկ ես, բայց տակաւին
անցած չէ :

Պարսպ տեղը կը ջանայի միտքս անկողինէ
ո՛ւր գտնուիլս յիշելու համար : Անպատճառ ինձի
անանկ կը թուէր որ տանս մէջ կը գտնուիմ ու աչ-
քս բոլորտիքս կը պտտցնէի կրնա փնտռելու համար :

Վերջապէս տեսնելով որ ինքնիրեն չպիտի կըր-
նամ խելքս գլուխս բերել, հարցուցի տէրտէրին :

—Ո՞վ ես դուն, այս որ՞ժն տունն է, ո՞ւր կը
գտնուիմ :

Տէրտէրը զգաց թէ որոշ բացատրութիւն մը ան-

հրաժեշտ էր, ուստի ամբողջ առաւ. ու անկողնիս
քով նստեցով՝ յարեց.

— Չե՞ս յիշեր որ ասիէ չորս օր առաջ, գիշեր
մը, նաւով Սրատա ելար Գարիթան Ֆանտի խըմ-
քին հետ ու առտուն կանուխ հոս հասար ու մենք
ձեզի զիմաւորեցինք: Հիմա կրետէ կը գտնուիս,
Ասորո Վոնայի լեւներուն մէջ, Գարիթան գեղը,
Էվանկէլիոս տէրտէրին տունը:

Այս բացատրութիւնը մտքիս բոլոր մշուշները
ցրուեց:

— Գարիթանը ո՞ր է, հարցուցի:

— Ո՛հ, անոնք ցերեկը հանգստանալէ ետքը
գիշերը նորէն ճամբայ ելան. հիմա շատ հեռուն ը-
լալու են, թուրքերու հետ կռիւի մէջ: Աստուած
պահպանէ զիրենք:

Քիչ մը ատեն երկուքս ալ լուռ ու մունջ մնա-
ցինք: Նոյն միջոցին սենեակին դուռը բացուեցաւ
ու ներս մտաւ կայտառ աղւոր աղջիկ մը, ձեռքը
ափսէ մը բռնած:

— Պարոնին համար քիչ մը ապուր բերի, ըսաւ
խօսքը տէրտէրին ուղղելով:

— Բե՛ր, աղջիկս, բե՛ր. խեղճը երեք օր է քե-
րանը բան չէ դրած:

Ապուրը խմեցի ու աղջիկը ափսէն ու պնակը
առաւ դուռն ելաւ:

Տէրտէրին ցոյց տուած աղնուութիւնը բոլոր-
վին յուզեց զիս:

— Տէր հայր, չնորհակալ եմ ձեր մարդասիրու-
թենէն. շատ կը ցաւիմ որ այսչափ նեղութիւն կը
պատճառեմ կոր ձեզի:

Տէր Էվանկէլիոս ոգեւորութեամբ մը գոչեց.

— Բաքրիօքի մը երեք ինծի նեղութիւն չի
պատճառեր. տունս, սեղանս, անկողինս, ամէն ու-
նեցածս պատրաստ եմ զոհելու իրեն: Դուն որ քու
ազգիդ վերելութեան համար այնչափ հերոսութիւն
ներ ընելէ ետքը, հիմա ալ կրետէ կուգաս աղա-
տութեան համար կռուելու, միթէ նեղութիւն կըր-
նա՞ս տալ Էվանկէլիոսին՝ որուն հայրը Գանտիայի
մէջ կախուած է ու մեծ հայրը Քոլորադոյի մէջ
կուռած է թուրքերուն գէժ ու մեռած՝ Մորայի մէջ,
իմ «հերոսութիւններ»ս...:

Յայտնի էր որ յոյն ընկերներս իմ մասին պատ-
մութիւններ հնարած ու կլկեցուցած էին տէրտէրին:
Պործը չարեցի ու պատասխանեցի.

— Շնորհակալ եմ ձեր խօսքերէն և երջանիկ
եմ որ ձեզի պէս հերոսներու ընտանիքի մը մէջ կը
գտնուիմ:

— Ես ալ նոյնպէս երջանիկ եմ որ, գոչեց ծե-
րունին բորբոքած, փաշա մը և չորս պէյ զարկած,
երկու տոմիկ աղջիկ առեւանգած և ուռմբերով
պանքան մտած հերոս մը կը հիւրընկալեմ:

Ամօթէս գետնին տակը պիտի անցնէի: Աս յոյ-
ներն ալ գոնէ այդչափ չչափաւանցէին չըրածներս):
Բայց ա՛լ միջոց չի կար ընկրկելու, պէտ էր առաջ
երթալ:

— Պարզապէս պարտականութիւնս կատարած
եմ, պատասխանեցի համեստութեամբ:

— Կեցցե՛ս, ըսաւ Էվանկէլիոս, միշտ քրիստոն-
եային պարտականութիւնն է խաչը պաշտպանել
անհաւատներուն դէմ:

(Շարունակելի) ԺԻՐԱՅՐ

ՏԵՂԱՓՈԽՈՒԹԻՒՆ

Յարուբիւն Հալանեան պատիւ ունի ծանուցա-
նել իր բազմաթիւ յանձնարարներուն քե՛ր կօշկա-
կարի խանութը Պազար Մուրուրէն փոխադրած է
Փառնի Եփրեմիէի դիմացի կարգը՝ կազմ ընկերու-
թեան կեդրոնին մօտ բաւաժին մէջ, գեհնալարի,
քիւ 6:

Ձեռաւոր ու ընթեր կօշիկներու պատրաստ-
քիւն արանց եւ կանանց համար, դիւրամասշտիկ
զգեւոր:

Կ Օ Շ Կ Ա Կ Ա Ր

ՅՈՂՀԱՆՆԵՍ ՂԱԶԱՐԵԱՆ

ԳԱՀԻՐԷ. Էգպեֆիէ փողոց Էլօրասոյի դիմ

Ճաշակաւոր պատրաստութիւն արանց և կա-
նանց կօշիկներու:

Ապրանքի ընթացքիւն, տոկոսներու և գո-
հացուցիչ պայմաններ:

Գներու չափաւորութիւն: 2—4

PHARMACIE DE LA POSTE

ԴԵՂԱՐԱՆ Ե. ԱԻԱԳԵԱՆ

ԳԱՀԻՐԷ, ՓՕՍԹԱՅԻ ՇՐԱՊԱՐԱԿ. ՄԱՏԱԹԻԱՅԻ ԱՊԱՐԱՆՔԻՆ ՏԱԿ

Այս նորահաստատ դեղարանին մէջ յաճախորդ-
ները պիտի գտնեն եւրոպական լաւագոյն ցործա-
րաններէն բերուած թարմ դեղեր, չափաւոր գիներով:
Դեղագիրները ամենայն խնամք և ուշադրու-
թեամբ կը պատրաստուին:

Անգլիական և Ֆրանսական սքեսիալիթներ,
Թարմ հանգային ջուրեր, անուշահոտ քիւնք եւն.
Բնալուծական և մանրադիտական քննութիւնը:
Դեղարանս կը յաճախեն հայ և օտարազգի ծա-
նօթ բժիշկներ:

Բժշկական ձրի խորհրդածութիւնը ազատապ
համար: 29—50

ՅՈԹՕԿՐԱՅԻ ԷԺԻԲՍԻԷՆ

Ք. ՊԻԻՔՄԷՃԵԱՆ

ՇԱՐԱ ՄՈՒՀԱՄՍԷՏ-ԱԼԻ ԹԻԻ 120

Արհեստին վերջին կատարելագործու-
թեան համեմատ հաստատուած այս լուսանը-
կարչատան մէջ ամեն տեսակ լուսանկարներ
կը հանուին գոհացուցիչ գիներով:

Ամեն մեծութեան ԱԿՐՈՆՏԻՍԸՄՈՒՆՆԵՐ:
10—10

Ա Լ Է Թ Ո Ւ Ա Լ

Կ. Պոլսոյ մէջ հանրածանօթ ՊՈՍՏՈՐ Վաճառա-
տունէն Տեարք Յովակիմեան Եղարք այսօր առաւ
տատուած են ի Գահիրէ և Մուսթի փողոցը՝ Լաթէսի
գոհարավաճառատան զիմաց թաղած են վաճառատուն
մը ուր կը ծախուին բրդեղէն և բամպակեղէն Ֆանէլա,
գուլպայ և զանազան տեսակ ընտիր ծապիկներ, օձիք,
ներ, քեւնոցներ:

Ճոխ զանազանութիւն մարօֆեցերի, հոսեղէններ,
բու և արդու զարդի վերաբերեալ ամեն տեսակ ապրա-
նայ: Շեֆիթի հոշակաւոր պողպատեայ գործիւններ,
ածելի, մկրաս, զմելի ևն:

ԱՊՐԱՆԱՅ ԸՆՏՐՈՒԹԻՒՆ և ԱՆՄՐՑԵԼԻ ԳԻՆԵՐ:
Գաւառներէն եկած յանձնարարութիւնը ճշդիւ և
փութով կը կատարուին: 24—24

ԼՈՒԱՅԱՐԱՐ ԵՒ ԱՐԴՈՒԿԻՉ

Մ. ՏԵՐ ՍԱՀԱԿԵԱՆ

ՃԱՌՏԷՆ ՌՕՒԷՔԹԻ, ՇՐԱՆՏ ԱԶԱՏԱՆԻ ՆԱԿԻՆ ԽԱՆՈՒԹԸ

ԿԸ ԼՈՒԱՅ ամեն տեսակ ճերմակեղէններ
ու հագուստներ. ԿԱՐԴԻԷ արանց և կանանց
չապիկներ, շրջագեղաններ, ևն. մաքրութիւն,
ճշդապահութիւն, և խիստ չափաւոր գին:
24—24

Le Gérant: D^r. A. S. HAGOPIAN
Տպագրութիւն ՓԱՐՈՍ Լրագրի

ԵԳԻՊՏԱԿԱՆ ԵՐԿԱԹՈՒՂԻՔ

ԺԱՄԱՆԱԿԱՅՈՅՑ ԵՐԹԵԻԵՆԻԹԵԱՆՑ

Սկսեալ 1 Փետրուար 1897

ԳԱՀԻՐԷՆ ԱՂԵՔՈՒՆԴԻՐՈՑ ԳԻԾ

Կ Ա Յ Ա Ր Ա Ն Ք	Խառն	օմ նիւլ.	կէս ուղ.	օմ նիւլ.	էքսորէս	օմ նիւլ.	էքսորէս	օմ նիւլիւս	
	1,2,3,4գ.	1,2,3,4գ.	1,2,3,4գ.	1,2,3,4գ.	1, 2 4գ.	1,2,3,4գ.	1, 2 4գ.	1 2 3	կարգ
Գահիրէ	մեկ.	4 45	—	7 30	8 15	9 30	3 30	4 45	7 15
Պէնհա	»	8 —	—	7 49	9 32	10 15	4 47	5 29	8 32
Թանիս	»	11 28	—	8 30	10 30	10 55	5 45	6 7	9 30
Տամանհուր	»	11 48	6 —	8 34	11 15	11 —	6 26	6 11	—
Աղեքսանդրիա	»	3 10	7 34	9 41	12 49	11 58	7 59	7 7	—
Աղեքսանդրիա	»	6 25	9 15	10 45	2 30	1 —	9 40	8 7	—

ԱՂԵՔՈՒՆԴԻՐՈՑԷ ԳԱՀԻՐԷՆ ԳԻԾ

Կ Ա Յ Ա Ր Ա Ն Ք	Խառն	օմ նիւլ.	կէս ուղ.	օմ նիւլ.	էքսորէս	Խառն	օմ նիւլ.	էքսորէս	օմ նիւլիւս	
	1,2,3,4գ.	1,2,3,4գ.	1,2,3,4գ.	1 2 4գ.	առտ.	1,2,3,4գ.	1 2 4գ.	1 2 4գ.	1 2 3	կարգ
Աղեքսանդրիա	մեկ.	—	7 —	7 15	9 —	9 20	երեկ.	երեկ.	երեկ.	երեկ.
Տամանհուր	»	—	8 6	8 58	10 2	12 14	4 13	5 15	8 6	1 9
Թանիս	»	—	9 12	10 28	11 —	2 39	5 43	6 10	9 40	2 56
Պէնհա	»	6 15	9 16	11 20	11 5	2 49	6 30	6 14	—	3 6
Գահիրէ	»	7 18	9 59	12 23	11 46	4 43	7 33	6 52	—	4 25
Գահիրէ	»	8 30	10 45	1 35	12 30	6 25	8 45	7 35	—	5 50

ԳԱՀԻՐԷ-ՍԻԻԷՉ

ՊԵՆՀԱՅԻ ԶԱՄԲԱՅ

ՍԻԻԷՉ-ԳԱՀԻՐԷ

ԿԱՅԱՐԱՆՔ		Ա.Ա.Ա.ՈՑ	ԵՐԵԿՈՑ	ԿԱՅԱՐԱՆՔ		Ա.Ա.Ա.ՈՑ	ԵՐԵԿՈՑ
Գահիրէ	մեկ.	11 40	7 —	Սիւէշ (քարափ)	մեկ.	9 50	—
Պէնհա)	ժամ.	երեկոյ 12 28	7 48	» կայարան	»	—	3 30
	մեկ.	12 33	7 53				
Զակաղիկ)	ժամ.	1 34	8 54	Խամաիլիա	»	երեկոյ 1 20	7 5
	մեկ.	1 44	9 4				
Խամաիլիա	մեկ.	3 40	առտ. 1 —	Զակաղիկ)	ժամ.	3 7	8 53
Սիւէշ կայարան	ժամ.	—	5 —	)	մեկ.	3 17	9 3
Տօք (քարափ)	ժամ.	6 55	—	Պէնհա)	ժամ.	4 13	9 47
					մեկ.	4 17	9 4
				Գահիրէ	ժամ.	5 5	10 35